

նեխուի, ապա դաշտում՝ փռել և միայն երեք շարաթից յետոյ սկսել վարել սպօրական եղանակով:

Խթէ գարնանացանի արտերը պարարտացնելու պահանջ ունենան, պէտք է աղըլ դաշտ տանել աշնանը, հոկտեմբերին և փոխանակ մի քանի կոյտեր կազմելու և կամ փռելու պէտք է հաւաքել բոլորը միատեղ դաշտում և աղրանցների նման մի ահազին կոյտ կազմել. Ապա թեթե կերպով ամեն կողմից հողավ ծածկել որպէսզի ձմեռը աղըլ իւր ոյժը չկորցնէ. Գարունն սկսելուն պէս իսկոյն ամբողջ դաշտի երեսին փռել և անմիջապէս վարել, Այս կերպ վարուելով, գարնանացանքից կարելի է ըստանալ անհամեմատ աւելի մեծ աղբինք, քան թէ աղըլ գարնանը դաշտ կրէիք: որովհետեւ գարնանին աղըլ նոյն ամառուայ մէջ անկարող է փռել, Դեխուել, ուստի և քիչ օգնութիւն կարողէ հասնել գարնանային ցանքերին:

Այն երկներում՝ որ աշնան ցանքերը, յաշխախ սակաւ ձեւան և ցուրտ ձմռան պատճառով մրսումն ցրտահար են լինում: Լաւ կլնին աղըլ մի մասը պահել մինչև աշուն և տպա թեթե կերպով ցանել նոր գուրս եկած հիլերի երեսին, որից յետոյ, իհարիէ, այլ ևս կարելի չի լինի կրկին վարելու: Այդպիսի «մակերևութային» պարարտացումով, եթէ աղըլ բաւականին փռել է, կարելի է պահպանել աշնանանացանը ոչ միայն ձմեռնային ցրտերից, այլ և գարնանային քամիներից: Այսուամենային պարարտ սեահողով հարուստ արտերի վերաբերմամբ նշնչը չի կարելի գործադրել, որովհետեւ այդպիսով հացարոյսերը կթերուին և մինչև անգամ կփռուին արտի երեսին:



## ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱՌԱՍՊԻԵԼՆԵՐԸ

Մ. Խ Ր Ե Ն Ա Ց Ո Ւ

### ՀԱՅՈՅ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՄԵջ.

(ՔՆԱՎԱՏՈՒԹԻՒՆ և ՌԱՍՈՒԾՎՔ)  
(Եարունակութիւն) \*

Բ.

ՄԻ ՔԱՆԻ ԲԱՌԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԽԱՐԵՆԱՑՈՒՄ ՄԵՋԸ.

(Ասել: — Վիպասանիք: — Երգը վիպասանաց: — Ի թիւ ասել: — Թուել: — Թուելինացն երգը: )

ՄԻ անգամ որ ասել բայն Էմինը հա-

\* Տես «Արարատ» 1899 թ. համար թ. եր. 81,

ւասարել է երգել բային, ել այնու հետեւ լուրինացու մէջ ասել տեղի-անտեղի «երգել» կամ թէ «պատմել, ասել» են թարգմանում ըստ քմահածոյս, եթէ ուզում են երգ զուրս րե, բել երգել թէ չէ՝ ասել: Օրինակ, որ Խարաթիանն ըստ Էմինի՝ Վահագնի մասին «զորին ասեն առապելք», թարգմանում է, «երգում էլին նաև նորա աստուածացումը» (Յօսթեված եղ առօօզօց):

Սակայն «ասել» չէ նշանակում «երգել», այլ միայն մի բան «ասել», յայանել, պատմել, ինչպէս և աշխարհաբարում: Թերեւս որեւէ մատենագրի մէջ «ասել» ձեւաւոր առումով, լայնաբար ունենայ «երգելու» իմաստ, բայց որդգեռ ապացոյց չէ կարող լինել, որ ինքն իրեն վերցրած «ասելու» առ հինուն մեր նշանակեր երգելմա, <sup>2</sup> ինչպէս յայտնում է Էմինը և ասեմնին վերադրուած այդ իմաստն ապացուցելու համար բաւականանում է միայն զրելով: «Նաև յաշխարհիկ լեզուի մերում պահպանեալ տեսանի (իրրեւ թէ զրաբարում եղած լինելն արգելն ապացուցած է), ի սպարական բանիս «իսաղ ասել», որ է «երգ երգել»: <sup>3</sup> «Խաղ ասելու» վրայ կաւելացնենք և «երգ ասել»: «շարական ասել», «աաղ ասել»: Սակայն այդ օրինակներն ես գեռ չեն հաստատում, որ «ասել» նշանակում է «երգել»:

Էմինը և նորան հետեւղները մռամնում են, որ, եթէ երգ ասել խաղ ասել և նորագրեալ ձեւելը մի բառով ասում ենք «երգել», այդ երգելու իմաստը ոչ թէ «ասել» բայն իւր մէջ ունի, այլ երգ, տաղ, խաղ բառերից է ստանում: Այնպէս ինչպէս, օրինակ, Խորենացու մէջ զրոյց(ս) տալ նշանակում է զրոյցել, կամ ինչպէս աշխարհաբարում՝ ցոյց տալ նշանակում է ցոյցնել, բայց երբեք «տարմանակ» առած չէ նշանակում զրոյցել, կամ թէ «ցոյցնել», կամ ինչպէս ծառ ասել նշանակում է ծառել, բարող ասել՝ բարողել բայց:

1. Խալատ, Արմ. առօչ, եր. 201.

2. Էմին, Վկաֆ Հեղյան Հայաստ, եր. 93:

3. Նոյն եր. 93:

ոչ երդիք «ասել» մենակ առած «քարոզել», ձառել, — եթէ միայն լայնարար, ձևուոր առածնով չէ գործածուած, — այսպէս և փաղ ասել, «երդ ասել տասցուածների ասել» բառը մենակ վերցրած կարող չէ նշանակել «երդել»:

Արգարեւ մի բան կարելի է ասել ոչ միայն պատմելով, այլ և երդելով, սակայն Խորենացու մէջ այնքան յածախ և գործածւում ասեմ՝ բայլ պատմելու, յայտնելու, ասելու իմաստով, որ գժուար է կարծել իսկ, որ եթէ մինչև անգամ ասել նշանակեր էլ «երդել» — Խորենացին մի բանի երգուելով պատմուած, առուած լինելը յայտնելու համար բաւականանար միայն ասեմ՝ բայլով: Եւ իրօք տեսնում ենք, որ նու մի բանի երգուելով կամ երգի մէջ, պատմուելը յայտնելու համար միշտ զրում է: «Ասէին յերգն» (Ա. լա.): «Հ նուազը բամբառն և յերգս ցցոց և պարուց զայսոսիկ ասեն յիշատակօք» (Ա. դ.): «Զորմէ ասէին ի հինոն մեր, որը բամբուամին երգէլն» (Ա. իի.): «Վիպասանիքն յերգելն իրենանց ասին» (Բ. ծ.): «Առասպեկեալ երգեն: այսպէս ասելով» (Բ. ծ.): «Զայս կամելով երգել յառապեկն, Դոմետ զոմն ասեն եկեալ» (Բ. ծ.): «Նոյն իսկ այս բոլոր օրինակների մէջ, թէպէտ և երգի մասին է խօսքը, ասել բառը երգել չէ նշանակում և «երդել» բառով թարգմանել կարելի չէ, այլ միայն «ասել պատմել» յայտնել» բառերով, ինչպէս և բնականարար թարգմանել է: Հ. Ստեփանեն:

Մի անգամ որ ասեմ՝ բայի կարծեցեալ երգել իմաստը գէն ենք զնում, ըստ քմահանոյս երդ անուանած մի քանի կտորներ Խորենացու մէջ գտնում են սոսկ պատմութիւն, պատմուածք, միանգամայն և հասկանալի է լինում վիպասանիք բառի խսկական նշանակութիւնը:

«Ասել վէպս, չէ նշանակում «երգել վէպս», զպատմական երգս», ինչպէս զրում է լիմիրը, այլ միայն «պատմութիւններ ասել անել», քանի որ, ինչպէս տեսանը, «վէպս» պատմութիւն, պատմուածք է նշանակում: Ուստի և «վիպասանիք», նշանակում է, ոչ թէ, «վէպ-

երգոզներ», կամ քօնե էրիքական պատմութիւններ, այսինքն «պատմութիւններ», կամ, մի բառով «պատմողներ»: Միւս կողմից պէտք է գիտել, որ ինչպէս ճիշտ նկատել է որ, Փետական, 2 վիպասանիք ոչ միայն «պատմողի» համար է, գործածւում ինչպէս՝ «վիպասանիքն» յերգելն իրենանց ասեն» (Բ. ծ. թիթ.):

«Վիպասանիք», բարդ բառի թէ «պատմողի», և թէ «պատմուածքի», այսպիսի երկու նշանակութիւն ունենալը տարօրինակ բան չէ հայոց լիզուի մէջ: օրինակ՝ չենց նոյն կազմութիւնն ունեցող «գովասանիք» բառը նշանակում է թէ «գովիք ասող», և թէ «ասուծ գովիքը, գովիսալը»: Ինչպէս վերջին իմաստով գործ է ածուում «գովասանութիւն» համանիշ «գովասանիք» բառին, այդպէս և «վիպասանիք» բառին՝ երկրորդ իմաստուածքի մէջ «վիպասանիք» բառն առաջին (պատմողի) թէ երկրորդ (պատմուածքի) իմաստով առնուած լինի նշանակու: Ինը նոյն է մնում: բայց հաւանական է, որ երկրորդ, այսինքն պատմուածքի իմաստով լինի, քանի որ այս երկրորդ իմաստով առնուած ժամանակն է համանիշ «վիպասանութիւն» բառին, իսկ «երգը վիպասանաց», ինչպէս տեսանը, Փաւստոսի մէջ կոչում են «երգը վիպասանութեան»: Սակայն այս չէ մերժում: որ առաջին՝ «պատմողների երգ» իմաստով էլ առնուած լինի:

Այսպէս, հայոց վիպասանիք (կամ վիպասանութիւն), ինչպէս բառի կազմութիւնը ցոյց է տալիս: և ինչպէս Բ. զրբի խթ. զիսի մէջ պարզապէս վկայում է Խորենացին (մի բան, որ Էմինն աչքից փափցրել է) պատմուել են: Բայց քանի որ յիշուում են և «երգը վիպասանաց» (վիպասանութեան) և թէ վիպասանիքն (վէպ ասողները) երգում են, ինչպէս և «վիպասանաց», համար «երգիչը», բառն է գործածւում: ուստի պարզ է և այն, որ «վիպասանիք» (վիպասանութիւն) ոչ միայն պատ-

1. նոյն. եր. 93:

2. Ժերբեր, Հայի. Աշտամ. եր. 128. Ծան.:

մուել են, ոյլ և մասամբ երզուել. ինչպէս և մեր արդի ժողովրդական վեպը մանրամասնօրէն պատմում է, թայց և տեղ-տեղ երգ-ումէ, ինչպէս և պատմելու և մէջէ մէջ երգելու նոյն ձեւն եղել է և ուրիշ ազգերի, ուրինակի գերմանացոյ մէջ եւս:

«Վիպասանքի» (վիպասանութեան) երգուած մասերը բնականօրէն չափարերական պիտ հզած լինին, իսկ պատմուած մասերի համար այդ ասել ապահովապէս չենք կարող քանի որ կարող են այդ մասերն և արձակ եզած լինել: Ուստի և Էմինի սահմանումը «վէպս բառի համար—թէ, «վէպն հնոց ոչ այլ ինչ էր, թայց եթէ քերթողական պատմութիւն չափարերական, յորում զգործս քաջաց և թագաւորաց երգէին, որ և առ արդի Եւրոպացիս Երօք անուամբ սովորաբար յորջորջի, —ոչ միայն վէպի համար գլխովին սիսալ է, այլ և «վիպասանքի» համար չէ յարմարում:

Արդարեւ, «վիպասանքի» մէջ պատմութիւն է լինում այսինքն որ և է թան է պատմուում թայց այդ պատմութիւնը նեղ իմաստով կարելի չէ հասկանալ, ուստի սիսալ է և ող. Փետական գրածը թէ «Վիպասան» կընշանակէ նախ և զիսաւորաբար «պատմապիր»,<sup>2</sup> քանի որ «պատմապիր» անունը կարելի չէ տալ ժողովրդի մէջ պատմութիւններ անող մարգոց: Այդպիսի ժողովրդական պատմուածքների մէջ, անշուշտ շատ թան «պատմական» կայ, պատմական անձերի և իրողութեանց շատ յիշողութիւններ են լինում: թայց աւելի շատ առասպելական, զիւցազնական և նոյն իսկ զիցարանական է լինում անոնց մէջ, այնպէս որ

1. Wilhelm Grimm, Die deutsche Heldenage. Berlin, 1861. եր. 381: Խեմանացոյ մէջ եւս վէպն ասելու (vortragen) հաւաք գործ և ածուում սingen (երգել) էր սagen (ասել) թայերը, իսկ դիցագեական մկար, համամետ վիպասանին, իր կուում՝ Sage, Heldenage սացիէ և սagen (ասել) թայց, որովհետեւ նոց վկանը հանգամանորեւ ասուի, պատմուի և որոշ մասամբ միայն երգուի:

2. Ֆերրեր, Հայկ. Աշխ. եր. 128. ծան: Դժբախարար զերմաներէն բնագիրը մենի տակ լունինին, որ ևս մինչ թէ բնագիր մէջ «պատմապիր» բառի դիմաց ո՛ր բառն է: Հայերէն բառիրը լուսական է և առաջազնական բառը:

կարելի չէ ժողովրդական պատմուածքը «պատմութիւն» և պատմողին՝ «պատմոգիր» կոչել Ժողովրդի աչքին միայն իսկական պատմութիւնները, որոնց շատ անգամ առասպելական հերոսների մի ժամանակ իրապէս ապրած լինելուն և նոյն կատարած նոյն իսկ գերբնական արարքներին հաւատում է նաև ինչպէս և տեսնում են նոյն իսկ հերոսների մէջ նոյնը մեր արդի ժողովրդական վեպի մէջ կարող կարող լինելուն և առաջազնական երգոց, յորոց սամանք սոսկ երգ վիպասանաց, իսկ այլք՝ երգ թուելեաց կոչելին: Եետինքս այսոքիկ՝ որպէս անուանակոչութիւն իսկ նոցին ցուցանի, թերեւս կարգի ժամանակազրութեան հետեւ ինչ այն ինչ առաջինքն երեակայութեան և եթ գնային զիշետու: Այսպիսի տարբերումն ունութեագրումը զուտ երեակայական է, քանի որ Խորենացու մէջ վժուելեաց երգերը և «Վիպասանաց երգերը» մէջ բնագիրը մէջ բնագիր բովանդակութեամբ նոյնանում են: Որով և ապահովապէս կարելի է ասել, որ նոյն «Վիպասանաց երգերի» մի ուրիշ կոչումն է միայն՝ «վժուելեաց երգերը»: Էմինը նոյն տեղում՝ ծանօթութեան մէջ զրած է: «Այդ բառ [վժուելեաց երգ] ոչ այլ ինչ ցուցանի, բայց եթէ զիրդ «Ժամանակազրական» Բայց այդ մեկութիւնը ինչպէս ընթերցողը կրտսենէ, լոկ խօսքով է լինում: Այդ լոկ մեկութիւնը չէ արգարանում Խորենացութիւնը թարգմանութեան ծանօթութեան մէջ զրած է: Այդ բառ [վժուելեաց երգ] ոչ այլ ինչ ցուցանի, բայց եթէ զիրդ «Ժամանակազրական» կարգով գասաւորուած ընդարձակութիւնն ու ամբողջութիւնը ցոյց տալ Միւս կողմից պ. Խալաթեանն էլ, որպէս

1. Էմին, վկան մին. Հայ. եր. 101:

2. Տես հ. Ստեփանեկի բարզ. Մ. Խոր. Հայ. պատմ. եր. 389 ծան. 169.

զի առաջ քշել իւր տեսութիւնը թէ Հայոց վեպը շինովի բան է, և որպէս զի իւր յաճախ գործածած զենքը—այլարանութիւն ունենայ, տառմ է լոկ խօսքով՝ թէ ինքը Խորենացին է կազմել «թռւելեաց» բա ը՝ «թռւիլ— սկրտածաւ, բազածաւ—բայից յոդակի թիւ բայանուն ձեռվ «թռւելիք»—բայունայ—որ ինը պատմազիրը բացարում է այլարանութեան կամ որ նոյն է, ալլեզորիայի մըլլով։<sup>1</sup> Բայց աւաղ, Խորենացին ոչ մի տեղ չէ բացարում թէ «թռւելիք» նշանակում է «այլարանութիւն», և կամ «թռւելեաց» երգերը նշանակում են «այլարանական երգեր»։ Այդ բացարութիւնը հենց իրեն՝ պ. Խալաթմեանին է, միայն Խորենացու զվին կապած։

Մենք թռւելիք բառը (որի սեռականն է, մըլլելեաց) կազմուած ենք համարում ոչ թէ մըլլիլ (երեալ) բայից, այլ թռւել բայից, բայց վերջինս ոչ թէ համարել (համրաբել, համբել) իմաստով առած, այլ այն իմաստով, որ ունի այդ բայի թիւ արմատը «թիւ ասել» ձեի մէջ։

Մեր եկեղեցու մէջ մազթանքները, ինչպէս և Առաքելոց Գործքի ու թղթերի ընթերցուածները, «թիւ են առում» իսկ առետարան, մարգարելիք ընթերցուածները «ձայնիւ»։ Սաղմոսները, քարոզները երբեմն երգուում են, երբեմն «ձայնով» առումն երբեմն էլ «թիւ»։ Եկեղեցական երգերն ես որոշ տօներին «թիւ» են առու, մն օրինակ «Լոյս զուարթը» Մեծ Պատմին։<sup>2</sup>

«Ձայնիւ» կամ «ի ձայն ասելլը», որ երբեմն իրրե երգ ասելու հետ շփոմում են, մի տեսակ եղանակաւոր ասելն է, որ երգելու և թիւ ասելու միջին տեղն է բռնում։<sup>3</sup> Իսկ թիւ ասելն առանց որեւ է եղանակի (հմանոր բառը. Հայկ. լեզ.), սովորական ասելն

<sup>1.</sup> Խալաթ. Արմ. Թոօօւ եր. 1971.

<sup>2</sup> Տիւ. Տօնացոյց եւ, օրինակ, 1899 րուի Օրացոյց Ա, էրիփածնի փեր, 27, 28, մարտ 6, 13, 20, 27. հւնիւ, օրիդի հրահանքը։ Այս զուարթ թիւ ասաւ։ Ակսենի զուարթան Օրհենա անձն իմ զսկր։ Ամրկաւազի թիւ սասաց զարդարական վասն խթուուս։ Վասն ի գիշերիւել։ Ակսենի զուարթ։

<sup>3</sup> «Ձայն» բառի Եշանակութիւններից մեկն է եւ «երգելու եղանակ», որից եւ «շարականների ուր ձայները» եւն։ Բայց բառը հայկ. թեզուի։

և, որքան կարելի պարզ և հասկանալի, մատիկ սովորական կարգալու և պատմելու ձեւուն։ Մեր «թիւ ասելլը» նոյն է, ինչ որ Փրանսիացիք րécitation, réciter բառով արտայարառում են, այսինքն անգիր արած մի ձառ, ոտանաւոր կամ արձակ կտոր, իրեւ սովորած զաս ասել, արտասանել, առողանումից (ձեւաձանական խօսակցութիւնից կամ ընթերցումից բարձր ձայնով։<sup>4</sup>

«Թիւ ասելլու» (réciter) այս նշանակութիւնը որ այդ ձեն անշու շա «թիւ» բառից է, սատառում (հմատ. վերեւում անդ ասել, երգ ասել են, ձեւերի մասին), ինչպէս ընթերցողը կըտեսնէ, նոյն է, ինչ որ սովորաբար «ասել» բայով ենք միայն յայտնում։ Սովորաբար չենք ասում «ձառ թիւ ասել», «քարոզ թիւ ասել», «գաս թիւ ասել», այլ միայն ձառ ասել, քարոզ ասել, զաս ասել, ոտանաւոր ասել, անգիր ասել և նմանները։ Արդ, եթէ «ասել» և «թիւ ասել» նոյն նշանակութիւնն ունին, էլ ինչո՞ւ է վերջին ձեւ ստեղծուել։ Շատ հասկանալի է թէ ինչո՞ւ։ Ասել» բայր շատ ընդարձակ գործածութիւն ունի։ Ասել կարելի է երգելով «ձայնիւ», և սովորական ասելու, պատմելու (réciter ձեռվ Ուսուի և «ասել» բայով միայն օրինակ, եթէ ինի միայն՝ Հոյս զուարթ, սաղմոս ասելլ», կարելի չէ որոշ իմանալ թէ ինչպէս պէտք է ասել, «ձայնիւ» և թիւ, թէ երգելով։ Քանի որ «Հոյս զուարթն» ու սաղմոսները երգ են և սովորաբար երգւում են, ուստի և այդպիսի գէպում սովորաբար երգել էլ կըհասկացուի, բայց եթէ կամենում ենք, որ սաղմոսը չերգուի, այլ «ձայնիւ», այսինքն «եղանակով» ասուի։ «Ձայնիւ» կամ «ի ձայն» բառն ենք աւելացնում։ Այդպէս և յատկապէս սովորական ասելու, պատմելու, ձեւ հասկացնելու համար՝ աւելանում է համանիւ «թիւ» բառը և կազմում է «ի թիւ ասել», որ բառացի նշանակում է «թռւով, թռուի ձեռվ ասել», որ նոյն է սովորական «ասել» պատմելու, ձեռվ ասել։

<sup>4</sup> Երբեմն սովորական ձայնով կամ սովորականից ել գտն ձայնով են օրիւ ասում, բայց այդ միայն են օրիւ ասում, բայց այդ միայն պատմելու, ձեռվ ասել։

Թթիւ բառը սկզբնապէս «ասելու», պատմելու իմաստ ունի անշուշտ և փթիւ ուսանել, գիտել, ասացուածների մէջ, որ նշանակում են բերան ուսանել, զիտենալ։ Այս տեղ «թիւ» բառը կարող չէ իրբե ուսերե, այսինքն քանակի իմաստով առնուած լինել այլ միայն «ասելու», պատմելու» իմաստով։ Այդ ասացուածները բառացի նշանակում են «թուի համար», այսինքն՝ թիւ ասելու, պատմելու համար ուսանել զիտենալ։ Եւ որովհետեւ «թիւ ասելիս սովորաբար, սկզբնապէս անշուշտ միշտ, ոչ թէ կարգացում է, այլ բերան է ասւում ուստի և հասկանալի է թէ ինչպէս թուիս, այսինքն (թիւ) ասելու համար ուսանելը, ստացել է «բերան անելու, իմաստ»

Թիւ (ասք) ասել) արմատից կազմվում  
է թուել բայը, որ կարող է նոյն իմաստն ու-  
նենալ, ինչ որ ի թիւ ասել։ Եւ Խորենացին  
երեք տեղ այդ բայը գործ է ածում համա-  
նիշ ասել, պատմել բայերի։ Բ. կդ. գը-  
րումէ։ «Զոր (Ծիգրանի հաստատած կըրտ-  
սերագոյն ազգերը) ոչ անուամբ պատմես-  
ցուք .... այլ միայն զոր հաւասարի գիտեմք  
զինիսն։ իսկ Բ. Ճ. համանման գէպքում  
նոյն իմաստը նոյն բառերով, միայն «պատմե-  
լու» փոխանակ մթուել, գործածելով։ «Զորս  
(Արտաշէսի որդիներին) ոչ կարեոր համարե-  
ցաք այժմ անուամբ թուել բայց զինիսն յոր-  
ժամ ի գործ ինչ հասանիցեմք»։ <sup>2</sup> իսկ Ա. և.  
ասել և մթուել բայերը միենոյն պարբե-  
րութեան մէջ համանման տեղում իրար փո-  
խանակում են։ «Պատմէ մեզ զայսոսիկ յոլով  
իր հաւասարին Արիւգենոս, և ասէ այս-  
պէս։ Նիսս Արբէեզայ, Քայլայ, Արբէեզայ,  
Անէերայ, Բաբեայ, Բէլայ, Նոյնպէս և զմերն  
.... թուէ այսպէս։ Արայն գեղեցիկ՝ Արամեայ,  
Հարմեայ, Գեղամեայ, Ամսսեայ» են, <sup>3</sup>

#### 4. Shu Unr puang, khwih, khantib:

5. «Թուիկ» բայր գործ ածած կայ եւ երկու տիզ, ուր դժուար է ոռչիկ՝ ասելու, թէ համարելու խմասով է: Առ և «Ամֆ Ժամանակաց Մննդոց Քամայ միմիկը ցնի- անս ու ուրեմն գտանին բուհաւ» — հաշուած, թէ պատ- ճի աւ, ասացիք: Հ. Ուսկիաննեն վերջին ձեռու է հասկած

Այսուհետեւ թ. ը. կարգում ենք. «Քանզի կարի իմն անյարմար թուէին նմա (Տողբին) երգ ըստիցն վասն ուժեղութեանն և սրտեաց լինելոյն. որում ոչ Սամանի և ոչ Երակլեաց և ոչ Սագճին յարմարեն այս զրոյցքու Քանզի երգէին նմա բուռն հարկանել» ... Պ. Խալաթեանն այս կտորը թարգմանում է. «Տողբի ուժի և անվախութեան մասին երգի խօսքերը (слова п'есни о . . .) այնքան անյարմար էին, որ դժուարութեամբ կարելի է վերապրել անոնք ( . . . до того не складны, что съ трудомъ рѣшишися прописать ихъ) Սամանին, կամ Հերակլէսին, կամ մինչեւ իսկ Սագճին, թուէ այս թարգմանութիւնն անձիշտ է, պարզ է. Դուրս է ձգած նմա բառը և թուէին գարձրած է էին. թողնելով դեռ մի կողմ այն, որ երգ ըստիցն թարգմանած է երգի խօսքերը և որում շինած է «այնքան . . . որ դժուարութեամբ»: Սոյն կտորը հ. Ստեփանէն թարգմանում է. «Որովհետեւ շատ անյարմար ըաներ էր թուռմ երզը նորա ուժեղ և քաջ լինելու մասին: Այս զրոյցները ոչ Սամփոնին, ոչ Հերակլէսին և ոչ Սագճին են յարմարում: Այս թարգմանութիւնն ևս ճիշտ չէ. թուէին յոգնակի թիւը գարձրած է եղակի թուռմ էր, որպէս զի յարմարուի եղակի երգ բառին, որ ենթակայ է գարձրած: Կարի իմն անյարմար գարձրած է շատ անյարմար ըաներ, մինչեւ այդ բառերը կամ մակրայօրէն են զրուած թուէին բայի վրայ՝ «կարի իմն անյարմար թուէին», շատ անյարմար կերպով թուռում էին, կամ շատ-շատ, իբրև ածական երգ բառին, միայն թուէին նմա բառերով բաժանուած երգ բառից, ուրեմն «կարի իմն անյարմար թուէին նմա երգ բանիցն» փոխանակ «թուէին նմա կարի իմն անյարմար երգ բանիցն»: 2 Այսուհետեւ գուրս են ձգած «բանիցն», «նմա» և «որում բառերորու: 3

Եւ բարգմանած կ պլի մի տեղ չին զժուում յիշուածած։  
Խակ միւս դպիսն է. «Արպես եղիպտացիք բութեն հաւասար  
Մովսիսի» (Ա. հ.):

<sup>1.</sup> Халат. Арм. Эпосъ. *kr.* 326:

2. Հմես «Պարսից անտարժար ին ամուռ ու անհայ»

•Անմիտ եւ անհանձաւը բակաց յարժարանիք; (Ա. զիրք, Ցաւկովուած):

5. Անշուշտ, շամա անյարդար ու միեւնու պատճե

թեսագրի այս բոլոր խեղութերը թարգ-  
մանելիս՝ առաջանում են «թուել» բայի ի-  
մաստը չհասկանալուց։ Որովհետեւ եթէ «թուե-  
լին» բառն իւր սովորական իմաստով իրեկ  
թուել (երեալ) կամ թէ ներգործաբար՝ հա-  
մարել (համբարել, համբել) հասկանանք, այն  
ժամանակ այդ հատուածը բառացի դուրս կը-  
գայ. «Որովհետեւ շատ անյարմար կերպով  
թուում էին (երեւում էին, համբարում էին)  
նորան (Տորքին, ար, հողով) նորա (իրեն՝  
Տորքի) ու ժեղութեան և սրտոտ լինելու մա-  
սին պատմութիւնների (կամ պատմող) երգ», +  
կամ թէ. «Որովհետեւ նորան (Տորքին,  
ար, հողով) թուում էին (երեւում էին կամ  
համբարում էին) նորա (իրեն Տորքի) ուժե-  
զութեան և սրտոտ լինելու մասին պատմու-  
թիւնների (կամ պատմող) շատ անյարմար  
երգ»։ +: Սակայն այսպէս՝ անշեթեթութիւն է  
գուրս գալիս։ Ուստի՝ ոչ թէ պէտք է բնա-  
գիլն աղճատել այլ «թուելին» բառի մէջ ու-  
րիշ իմաստ պէտք է որոնել և յատկապես  
վերեւում քննած (թիւ) ասելու իմաստը։

Աելով՝ «քանիւր» բառը բնագրի մէջ և այս «քանից» բառից  
չէ վերցած, ամէն որ կարելի է կարծել, որ բարզմանի-  
ւը «բուհին ։ ։ ։ երգ բանիցն» նախադասուրեան մէջ «երգ»  
և «քանիցի», ըստ բարզմանիի, յափացուցիչը «քանիցն» կար-  
մած լինի միւսնայն «բուհին» բայց գլխաւոր յացուցիչ։

• Հմես. պերհում «երգ բանիցն» ասացուածի բացառութիւնը. «Երգ բանիցն զա ս և ուժեղութեանն եւ սրեայ լինելոյն» բառացի բարգմանած՝ «նորա ուժեղութեանն եւ սրեայ լինելոյն մասին պատմութիւնների երգ» աշխարհաբարում գեղեցիկ յէ դուրս զախս աշխարհաբարի յատկութեան պատճառով: Մինչդեռ մկուն զրաբարին յատուի կ զյականին, եզ. կամ յոցեւ սկսական նորովով, իրեւն ածականաբար ատենած որոշի բառ գործածուեցը, եւ միաժամանակ միեւնույն որոշին իրեւ բայանուն կարող է ենակից ունենալ իւր ճախադասուրեամբ խնդիրը [Երգ բանիցն զա ս և ուժ. Ք], աշխարհաբարում պետք դյականին Տեղ ածական յէկը զյականը իւր մասականը դնել կամ երկ զյականը իւր մասականը ունել դերբայ ու երկրորդական ճախադասուրեան գործածել իւր գրել «նորա ուժեղութեանն եւ սրեայ լինելոյն մասին»:—Այսպիսին եւ «յուր շարին բանիցն երգ զա ս և ուժությունն եւ նորա» աշխարհաբարում առկի բառ է բարգմանին՝ Արտահ մէջ շարունակ են Արտաշէսին իւ նորա որդուց մասին բառուած (խօսելը) պատմութիւնները, բայ քեւ ... մերաշէսին իւ նորա որդուց մասին իրեւնը խօսելը:

Այդ նախագասութեանն անմիջապէս հետեւում է. «Քանզի երգէին նոյն բուռն հարկանել».... որ պ. Խալաթեանը թարգմանում է. «Երգում էին նորա վրայ» (Անլի որ հեղ), իսկ հ. Սաեփանէն. «Երգում էին նորա մասսին»: Թէ, «թուէին նմա» նախագասութեան ենթական նոյնը պիտի լինի, ինչ որ «Երգէին նմա» նախագասութեան ենթական է, շատ պարզ երևում է շարադրութեան կաղմութիւնից: Արդ, «Երգէին» յոզն. Յ-րդ գէմք կամ իրրե անդէմ է վերցրած, կամ «Երգէին» ժողովրդի երգիչները» իմաստով: Այսպէս և «թուէին» յոզնակի բայի ենթական ոչ թէ եզակի «Երգ» բառն է, որ քերականօրէն լինել կարող չէ, այլ նոյն ժողովրդական երգիչները պիտի լինին: Կամ երգէին, ձեր պէս և «թուէին» իրրե անդէմ առնուած: Այսպիսի գործածութեան մէջ «թուէին նմա երգ», կարող չէ ունենալ «թուում էին (երևում էին կամ համբարում համրում էին) նորան» (արց բակ. հոլ.) երգ», իմաստը, այլ մօտաւորապէս նոյն իմաստը կարող է ունենալ: Ինչ որ «Երգէին նմա երգ» կամ «ասէին նմա երգ» այսինքն «Երգում կամ երգ էին ասում նորա վրայ»: Թուէին բառն այս իմաստով ըմբռնելով վերեւում գրած Ծորքի մասին հատուածը հասկանալու համար՝ այլ ևս անշուշտ կարիք չկայ բռնազրուաբար յեղաթիւրելու և խեղելու այն, ինչպէս արել են պ. Խալաթեան և հ. Սաեփանէ:

Արդ՝ եթէ «թիւ» արմատը և նորանից կազմուած «թուել» նշանակում է «ասել», «պատմել» (réciter), չհետ է ասել թէ «թուել»

ւ. «Թիւ» արմաքի եւ նորանից կազմած «ըրտել» բայի հշանակուրիէլը «ասել, պատմել», մի տարօրինակ բան սիմի յիւրիշ, բանի որ ուրիշ թկուների մէջ եւս Տեսնում ենի նոյն երեւոյքը առաջացած անշուշ նոյն նոդրանուրիամբ, կամ րե թկուների իրաւ վրայ ունեցող աղջկցուրիամբ: Այսպէս յունարկէ λέγω ասել, պատմել, կարգալ, այլ բուհը համարել ձեռօս իօս, բան(f), պատմուածք, գրոյց, այլ եւ բուհը լը, հաշունը, համարելը: Խափիներկն computare բուհը հաշունի բուհը ապա ծանր արևասանել: Նոյն բարը լատիներկնից գուտսը Երևանինում compter բուհը հաշունը, եւ counter (գրութեան ձեռով միայն տարբեր արտասանուրիամբ և կոմպուտարը բանից ծագմամբ հաւասար compter բանին) առել պատմել, complete հաջիւ, համար, իսկ conte

լիք» ինչ է՝ նշանակում: Այդ բառն իւր կազմութեամբ կարող է՝ կրկնակի նշանակութիւն ունենալ: թէ «թուողներ», այսինքն «թիւասողներ», ասող—պատմողներ», և թէ «թուածը», այսինքն թիւ աս սծը, ասած պատմածը, ինչ որ աւուեմ պատմում է»: քանի որ նոյն ածանցիկ մասնիկը թէ ներգործականի և թէ կրաւորականի իմաստ ունի: Եւ այսպէս, «թուելիք» բառն իւր երկու իմաստով ևս համանիչ է՝ «փիպասանք» բառին: որը, ինչպէս ահասանք, նոյնպէս նշանակում է թէ՝ «պատմութիւն անողներ» ասող-պատմողներ», և թէ «արած պատմութիւնը» պատմածը: ասծ—պատմածը»:

ՄԵՒԱՆՈՅՆ երգերի «վիպասանաց երգք» և  
«թռուելիաց երգք» կոչումներն ուրեմն համա-  
նմտն նշանակութիւն ունին և բիուն էլ  
մտածութեան մի և նոյն եղանակով են կազ-  
մուած, միայն ասաբեր արմատներից. այսինքն  
երկու կոչումն էլ վեպն տաելու արտաքին  
ձերց են վերցրած: Մտածութեան նոյն եղա-  
նակով է կազմուած, օրինակ, և ուսաց ըկա-  
զուել (ասող) բառը, որով կոչում է ուս-  
աց վեպերի, վիպական երգերի (բայսա)  
պատմողն ու երգողը:

Եթե մէկը լսած լինի թէ ինչպէս մեզ-  
նում ժաղավրդի երգիշները, օրինակ մեր ա-

շուզները, կամ «Սանու ծռեր» պատմոյները, ասում են իրենց վեպերը (աշուզները մեծ մասամբ թուրքերէն), մէջէմէջ միայն երգելով, նկատած կրյինի, որ նորա «ի թիւ ուսած» այսինքն բերան արած, բարձրածայն արտասանելով ասում պատմում են լոկի միատեսակ ուժով քիչ երկարելով. ուրիշ խօսքով նորա «թուամ են», «թիւ են ասում»։ Վէպերն այսպէս «թուելու», «թիւ ասելու» եղանակը, ինչպէս և «թիւ» բառն այդ իմաստով, նոր չե հարկաւ և մէայն հայոց մէջ չե. մեր հին պիպասանք, ել շատ ապրեր ձեռք չպէտք է ասած լինին իրենց վեպերը։ Եւ այս շատ հաւանական է երեւմ այնու, որ այդ վիպասանք կամ նոցա պատմուածները կոչուել են «թուելիք», այսինքն թուողներ։ թիւ ասովներ, ասող-պատմողներ։

Ս. Արեգակնալի.

( $\tilde{e}_1, \dots, \tilde{e}_m, -\tilde{e}_{m+1}, \dots, -\tilde{e}_n$ ).



1. Հարկ է նկատել, որ «քուիրեաց» երգիրի այս բացառութիւնն արդյուն գրած էին, երբ պ. Խաչարեանի «Վեհապատճեն» մէջ եր. 197, այժմ փախցած ծանօթութեան մէջ նկատեցին, որ պ. Մայն 1890 բուհն իր գրուածին մէջ՝ „Ինձ լուսուն ոռոշձկու ու Արմենիօ” (եր. 5 6, պատճ Յառ. Յօստ. օտ. Ամո, րուսեց. օճակ. տ. I. 211—241), որ մեզ յէր յաջողուած իր ժամանակին կարդար, մի նման ձեռն բացառած եր բուհ էր բայցից: Այդ գրուածին ասպա ձեռն ընթերվ, ուրախութեամբ ժևամենի, որ նորա բացառութիւնն իսկապէս «կուանուիթ» (ծովածկա), ինչպէս ինքը կուզում է, և ուրիշ ամբ նոյնն է, ինչ որ մերը: Անկորդ ին վիճի գույք նորա բացառութիւնն ամրուց դնել այստեղ: Եր ու եշից բառը ևս համում եմ բուել բայցից: այս երկու բառը հայոց կմն բանասնադուրիեան մէջ, ըստ երկուուրին, յատոկ (επειδιαληος) նշանակութիւն են ունեցել եւ ցոյց են սույն ուսմաւուր յօրիներու, կամ առարիթելու նշանակներց մկներ: բայց ևս չեմ կարդ ասկէ՝ քե արդիօֆ և զան ակաւուր (на распиновъ) կարդ չառնչն է, իր եւ ունենի իստասիւր արտասանեն են ունենի ունենի, քէ առնեն ունենի մին (զիկլամացիա): Են վերաբերելու են մինիւն անգամ չեմ իշխառ մայս բառը մօնեցնել քի ու բառին: որ ասունածպաշտական գրենի մէջ դրած է որոշ տեղերուն, որոնք չեն երգուն: այլ կարդարում են իրեն իշխանական ունենալու համար: կարծում եմ բառական է, երկ ինձ յաջողուի ցոյց տալ մի զեսոյ միայն, որը իմ յայտնած նշանակութեամբ զործ է ածուած բուել բայր, որից ըստ